



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9032

281 69

5-51

674


111

111

101

101

ВРЕДНОСТИ



ВРЕДНОСТИ

ВРЕДНОСТИ

5164  
5-31

577  
NOV 2009

ԿՅՈՒՄԱՆ ԶԱՅՈՒ ՔՐԻՍՏՈՍԵ ԶՈՒՄԱՆ ՊԱՐՏԱՆԵՅԻ ԳՐԱՆ  
ԿԱՅԱՆԵԼԵ ԵՆԵՐ ԱՐԻՔԱՆԻՅ: ԴՆՅՆԻՒՆ. 1901 Ք. ՔԱՐՔԱՆԸ:

300

1490-ՍԵ

ԸՆԹԵՐՑՈՂ ՆԵՐԻ

ԿՅՈՒՄ

ՈՒՂԱԴՐՈՒԹԵԱՆԸ



Մ ա տ ո լ Գ

ՄԵՍՐՈՎ ՔԱՀԱՆԱՅ ՄԵԼԵԱՆ

1003  
12159

ԲԱՐՈՒՄ  
Տպարան Ն. Պ. Գուրսիպյան  
1901

Доволено цензурою. Тифлисъ, 12 Юля 1901 г.

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐԻ ՈՒՂԱԴՐՈՒԹԵԱՆԸ.

Ամեն մի փոքր ի շատէ ուշադիր ընթերցող կը նկատի, թէ ինչպէս «Մշակ» լրագիրը յանկարծ փոխեց վարմունքը դէպի ինձ, որ քսան երեք տարի շարունակ աշխատակցել եմ, որ դեռ գիմնագիտնի աշակերտ թարգմանութիւններ անելու պատուէրներ էի ստանում «Մշակից», որ դեռ ութսունական թուերին իմ գրուածներին ոչ միայն սիրով տեղ էր տալի «Մշակի» մէջ հանգուցեալ Գրիգոր Արծրունի, այլ և իր ընթերցողների առանձին ուշադրութիւնն էր հրաւիրում նրանց վրա: Բացի սրանից՝ նոյն իսկ իմ հասարակական համեստ գործունէութեան մասին, որ քսան տարուց աւելի մի ժամանակամիջոց է բռնում, աննպաստ դիտողութիւններ չէ հրատարակել «Մշակը», ել՞թէ հաշի շառնենք գոհունակութիւն արտայայտող տողերը. սակայն այս ամենը միանգամից մոռացվեց ներկայ խմբագրութեան կողմից. — պատճառը՝ Արիստակէս եպիսկոպոսի «Քահանայական Խնդիր» գրքի մասին իմ արած քըննադատական փորձերն էին:

Ես չկարողացայ լռել սրբազանի այդ աշխատութիւնը կարգալուց յետոյ. ես չկարողացայ չտեսնել թէ ինչպէս այնքան մեծ հռչակ, անուն ստացած Արիստակէս եպիսկոպոսը իր գրքով պարզ մերկացրել էր իր անջիգեար, չոր գործունէութիւնը,

Թէ ինչպէս հրապարակ էր հանել բուն գիւղական ժողովրդի մէջ և ժողովրդի համար գործելուց, այլ և այլ պատրուակներով, փախուստ տալու իր աչքի ընկնող առաքինութիւնը, թէ ինչպէս լոյս էր հանել իրենց կոչման չհամապատասխանող քահանաներին Թիֆլիսից գաւառ քշելու իր արած պաշտօնական միջնորդութիւնը, թէ ինչպէս պարծանքով համարել էր հիմնական բարեփոխութիւն քահանաների գիտութեան չափը նրանց ստացած արգիւնքի կամ բնակած տեղի հետ կապելու սինոդով արած իր կարգադրութիւնը. նա իր գրքի մէջ իբրև հիմք անց էր կացրել այն նահապետական միտքը թէ միմիայն հովիւների անարժանութիւնն է պատճառ կրօնափոխական շարժումների, բանտերն օրէնսընդդէմ յանցաւորներով լցվելու, ազգի մտաւոր ու բարոյական պարզացման գործի 100-տարով յետ գնալու և այլն, և թէ ինչպէս — «Մշակ» ոչ միայն բոլորովին շտեմնելն էր տուել այս ամենը, այլ և մի գյուլս գովել, դրուատել էր այդ գիրքն այն պատճառով, որ գրողը իր կուսակից Արիստակէս եպիսկոպոսն էր և որ այդ գրքով Ռուսահայքի աչքի ընկնող, այն էլ որոշ բանակի պատկանող, հանգուցեալ թէ կենդանի բարձրատիճանների արարքներն էին մերկացել:

Գրիչ առայ ձեռքս և փորձեցի ընթանալ Արիստակէս սրբազանի բացած և «Մշակի» փառաբանած ճանապարհով. փորձեցի ձեռք առնել այն շափերն ու միջոցները, որ գործ էր գրել Սեղրակեան սրբազանը ուրիշների վերաբերութեամբ, որպէս զի գուրս բերած լինեմ և իրեն՝ Արիստակէս եպիսկոպոսին. հետևանքը եղաւ շատ աննպաստ նկարագիր իր անձի: Սակայն ինչ վնաս: Եթէ ուրիշներին մերկացնելը

լաւ էր, ըստ «Մշակի», և առանձին գիրք գրելու չափ կարևոր ըստ Արիստակէս եպիսկոպոսի, պէտք է լաւ լինէր և իրեն՝ ս. Սեղրակեանին մերկացնելը, մանաւանդ երբ այդ մերկացումը տեղի էր ունենում սրբազանի իր ձեռքով իր մասին գրած-տպածներով, այլ ոչ թէ այլ և այլ արխիւներից, ո՞ր գիտէ, որքան հաւատարմութեամբ, քաղուածքներ անելով:

«Մշակին» կուռքեր պաշտելու արատից իսպառ հեռու և միշտ անաչառ դատաւոր տեսնելու ջերմ և անկեղծ հաւատաւորութիւնիցս ուղարկեցի քննադատական փորձերս այնտեղ տպվելու, մտածելով, գուցէ խմբագրութիւնը դէմ առ դէմ կանգնելով փատօրէն հանդիսացրած պարագաների առաջ՝ սթափվի, զգայ «Մշակը» ճշմարտութեան, անաչառութեան վրա պահելու իր սրբազան պարտաւորութիւնը, բայց... ոչ միայն մերժեց ներկայ խմբագրութիւնը այն տպելու, այլ և չկարողացաւ շարտայայտել իր խիստ տժգոհութիւնն իմ դէմ...

Ես վճռեցի հրատարակել առանձին գրքոյկով:

«Մշակի» ներկայ խմբագրութեան անգամները Գրիգոր Արծրունու մեծութեան առաջ խոնարհ պաշտամունքներ մատուցող հասարակ պաշտօնեաներ լինելով հանդերձ՝ չեն մոռացել ի պաշտօնէ ժառանգելու, իւրացնելու նրա հրամանատարական հոգին:

Ներկայ խմբագրութեան այս հրամանատարական հոգին էր, որ աւելի ու աւելի զայրոյթով էր լցվում, որքան համոզվում էր, որ հակառակ իրենց սպասածի՝ արդարև իմ քննադատական փորձերը տպագրվում են:

Խմբագրութիւնը որոնում էր առիթ ինձ վատարանելու: Ախալցխայի երեսփոխանական խնդիրը

տուեց այդ առիթը: Իմ «լիազօր քննիչ» նշանակվելու շնչին հանդամանքը «Մշակի» էջերն ամեն կողմից և՛ լայնութեամբ, և՛ երկայնութեամբ բաց արեց ինձ վրա յարձակումներ գործողների առաջ: Յառաջ անցաւ երիտասարդ ասպետ Տ. Յ., ամօթ կարդաց ինձ, դաւաճան անուանեց ինձ, և՛ նշանը տրվեց — յարձակումն ըսկավեց բազմաթիւ կողմերից: Ասում եմ «շնչին հանգամանք», որովհետեւ թէ այն կարեւոր ու մեծ բան լինէր, եթէ այն արդարեւ սկզբունքի խնդիր լինէր, «Մշակը» պիտի խօսէր հէնց սկզբում, երբ ինձ նոր նշանակեցին, երբ ինքը լուր հրատարակեց այդ մասին, այլ ոչ թէ վերջերում, երբ գիւրբ ս լ ոյ ս տ ե ս ն ե լ ու վ ը ա է ր . . . .

Վերջապէս լոյս տեսաւ «ուղիղ տասը դիւժին երեսներից բաղկացած», ինչպէս համարել էր պ. Լէօ, փոքրիկ աշխատութիւնս և մեծ, շատ մեծ դայրոյթ պատճառեց «Մշակի» խմբագրութեանը: Յոգնած — ջարդված Տ. Յ. տեղի տուեց. հրապարակ իջաւ լեռնցի Հերակլէս կրակ կտրած Լէօ, որ թարգմանի առիւծ և բաց արեց բերանը, շող տուեց բոլոր ուժով լարած իր մտքերի անսպառ գոհարները «Մշակի» ներկայ թուականի 116, 117 և 118 համարների ուղիղ երկու դիւժին սիւնակների մէջ:

Պաշտպանեցէք ինձ, ով օլիմպիական աստուածներ, այս պարնասեցու ոտնահարութիւնից և անդուն բերանի բարկաճայթումներից՝ փայլակ, կայծակ, հուր, երկաթ, ամպրոպ, որոտ, դուրդուկ ու շանթ և մինչև իսկ արբն, մահ և գոյութեանս վրայ խաչ, որոնց ամենի գումարը՝ մի նոր ու փառաւոր մերկացումն՝ «Մշակի» ներկայ վարձկան խմբագրութեան բարոյական ու մտաւոր էութեան:

Պ. Լէօի կոյր Արիտակէտասիրութեան պատասխաններին դիմելուց առաջ կարեւոր եմ համարում հրատարակել այստեղ և «Մշակի» և առհասարակ մեր մամուլով հետաքրքրվող ընթերցողների ուշադրութեանը ներկայացնել այն բաց նամակը, որ տարոյս յունիսի 10-ին ուղղեցի «Մշակի» խմբագրութեանը և որ գամբիւղը նետել բարեհաճեցին պ. Քալանթար և ընկ.:

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ «ՄՂԱԿ» ԼՐԱԳՐԻ.

Բաժում — յունիսի 10-ին:

«Մայիսի 21-ի մատնաւոր նամակովս խմբագրութեանը կողմնապահ վարմունքը հանդէս գնելով, բողոքեցի „Մշակի“ արդարագատութեան առաջ: Միրում էի հաւատալ, որ այդ վարմունքը „Մշակի“ արդարագատութեան թուլանալու հետեանք չէր լինի: Սակայն գործի շարունակութիւնը հակառակը ցոյց տուեց: „Մշակի“ խմբագիր պ. Քալանթար «մայիսի 26-ի նամակով առ իս վերագարձնում է իմ «մի քանի հերքումները (մայիսի 7-ին, 11-ին, 12-ին և 15-ին գրած) և-ի միջի այլոց գրում. «որպէս զի կարելի լինի նրանց գետեղել՝ անհրաժեշտ է նրանց կրճատել: Կրճատումներ անելը և ամփոփումներ կատարելը «այժմ նպատակայարմար է այն պատճառով, որ միանգամից կարելի է որոշ համակարգութեամբ բոլորին «պատասխանել»: Այս էլ կատարում եմ. հերքումներիցս

«<sup>1/3</sup> մասը հանում եմ և վերադարձնում մայիսի 29-ին. «վերջապէս յունիսի 6-ից սկսում է լոյս տեսնել իմ հերքումը, բայց ինչպէս. — ի մբա գրուելի եմ անդ անիւրաւ սրի տակ անդամահատված և Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանին վերաբերեալ մասն իւզառ հանված: Դուք խնայում էք ձեր մշտական աշխատակից Տ. Յ. — ի անձնասիրութիւնն այն ժամանակ, երբ չէիք մտածել նոյնպիսի հոգածութիւն և իմ վերաբերութեամբ: Դուք ազատ բաց էք անում «Մշակի» էջերը ինձ վրա բազմաթիւ յարձակվող-ների առաջ, ինչպէս մի փաշայ, որ աչքով նշան է տալի իր ծառաներին յարձակվելու իր հակառակորդի կամ չսիրած մարդու վրա: Դուք թոյլ էք տալի նրանց ինձ և՛ դաւաճան, և՛ անամօթ, և՛ ստախօս, և՛ լարախաղաց և այլն և այլն անուանելու, դուք շտապում էք և մինչև իսկ խաչ դնել իմ գոյութեան վրա, իսկ ինձ միջոց չէք տալի ազատ պաշտպանվելու: Ես ձեզ ուղարկում եմ 2ր. դրամ, խնդրելով տպագրել իմ գրքի լոյս տեսնելու մասին յայտարարութիւն: Յայտարարութիւնս բաղկացած էր 20 բառից. ձեր լրագրի ճակատին դրած տակսայով՝ բառին 2 կոպ. հաշւելով պիտի լոյս տեսնէր գէթ 5 անգամ, բայց դուք հրատարակեցիք 3 անգամ. ուրեմն խմբագրութիւնդ դրամականի մէջ էլ այլ կերպի վարմունք ունեցաւ: Գիտէք, որ ձեր մշտական աշխատակից և «դատաստանական դահլիճների» սիրահար Տ. Յ.-ի խրատներին նայելով, պէտք էր դիմել դատախազին....»

«Այս ամենը ձեր վարմանց մասին շատ աննըպատ ապացոյցներ են: Դուք զրեցէք ձեր արժանաւոր անուներ:

«Չնայած այդ ամենին, այժմ էլ ուղարկում եմ «ձեր միւս մշտական աշխատակից պ. Լէօ-ին պատասխանո, \*) որ յոյս ունիմ նախկիններից ցաւալի «տառապանքները չբաշած լոյս կտեսնի «Մշակի» մէջ: «Ենթադրում եմ, որ այնքան համարձակ վէրքեր «տուղ պ. Լէօ չի վախենալ վէրքեր ստանալուց: «Ենթադրում եմ նաև, որ նա Տ. Յ.-ի նման մտավախ չի լինի և ոչ մի պայմանով թոյլ չի տայ անգղամահատութեան ենթարկելու իմ պատասխանը, որ «պէս դի շտայ ապացոյց վախկոտութեան և մանա-«ւանդ իսկական անասպետականութեան: Այն մասին պ. «Տ. Յ.-ի հետ երեւի կտեսնվենք առանձին բնօրհարով: «Խնդրում եմ բարեհաճէք տպագրել՝ ա. Կիւրեղ վարդապետին տուածս պատասխանը, քանի որ ինձ «ուղղած նրա պահանջը տպել էիք առանձին փութ-«կոտութեամբ: բ. Չարունակել տպագրել և գրքիս «մասին յայտարարութիւնը այնքան անգամ, որքան «պարտ էք մնացած և գ. այս բաց նամակը, որ «Մշակի» ընթերցողները ճիշտ գաղափար կազմեն «ներկայ խմբագրութեանդ մասին: Սրա հետ դնում եմ Կիւրեղ վարդապետին պատասխանս նորից ար-«տագրած, ենթադրելով որ թերևս կորած լինին այն «թերթերը խմբագրատանդ մէջ»...»

Ընթերցողների առաջ «Մշակի» ներկայ խմբագրութեան վարմունքը աւելի կատարեալ անելու համար կլինողէի այդ բաց նամակը կարգալուց յետոյ ի նկատի ունենալ, որ «Մշակը» № 127-ի վերջում յայտնել էր ինձ. «Կիւրեղ վարդապետի դէմ ձեր գրած պատասխանը մենք որոշել էինք առանձին

\*) Ծանօթ. Ար տպագրում եմ այս տետրակով:

տպագրել (ինչու. չէ որ դուք էիք առաջարկել ինձ միացնելու բոլոր հերթումները) և արդէն յանձնել էինք տպարանին, երբ ստացանք ձեր նամակը յունիսի 10-ից. կարգացինք այդ նամակը և զամբիւրը գցեցինք: Մի ըսպէ հաւատանք, որ արդէն յանձնած են եղել տպարան. բայց ինչ նպատակով խմբագրութիւնը չէր քաշվել մի փոքրիկ խարդախութիւն գործելու — նամակիս ճակատին «յունիսի 3-ին» խօսքերը դնելով: 25 որ այս նամակը շարունակութիւնը — մասը լինելով մայիսի 29-ի նամակի, չէր կարող այլ ամսաթիւ ունենալ:

Բայց ուր մնաց գրքիս լոյս տեսնելու վերաբերմամբ տուած յայտարարութեանս խնդիրը:

Եթէ յայտարարութիւնը պակաս անզամ հրատարակելը մի սխալմունք էր, կարծում եմ, նամակով յիշեցնելուն պէս, պիտի ներողութիւն ինդրելով հանդերձ շարունակէին հրատարակել. բայց «Մշակի» ջէնտլմէն խմբագրութիւնը բարեհաճել էր իմ իրաւացի յուշածելուց փաշայաբար վիրաւորվել և թոյլ տալ իրեն առաջարկել խմբագրատուն գնացած իմ բարեկամին յետ վերցնելու 2 ր. գրամը: Բարեկամս ամենայն արդարութեամբ հրաժարվել էր գրամները ստանալուց. նրանք սպառնացել էին իմ անունով Բաթում ուղարկել: Այս տողերը գրում եմ Թիֆլիսում. չգիտեմ որքան հաստատ կմնան իրենց խօսքին, \*) որով վրձինի մի նոր ու փայլուն հարուած ևս կաւելացնեն իրենց բարոյական գիմանկարին:

\*) Ծանօթ. Արդարեւ յետ էին ուղարկել իմ 2 ր. գրամը... Ինչ իրողներով: Ես էլ պահանջում եմ «Մշակի» էջերից ջնջել 3 ամսանոց տպուած յայտարարութիւնը: «Մշակի» այս փորձունքի մէջ որպիսի բարոյականութիւն է թագնուած. — թող դատեն ընթերցողները:

«Մշակի» ներկայ խմբագրութեան կոյր եսապաշտութիւնը ինքնիշխան սրագործութեան է ենթարկում նոյն իսկ պաշտպանուողի զրաժները և ապա թէ լոյս հանում «Մշակի» մէջ... Եսապաշտութիւնը անզուսպ հայհոյանքներ, վիրաւորանքներ, անարգանքներ է հասցնում, իսկ պատասխան ստանալ չէ կամենում: Ինչու. որովհետև խնդիրը, սկզբունքը չէ նրան զբաղեցնում, այլ անձը:

Քարանթար, Լէօ և ընկ., որ ամբողջովին հայհոյանք դառնան և ամենայն օր թափվեն իմ վրա կամ օգային խաչերի տեղ, որ իրենք ամբողջովին խաչ դառնան և իմ գոյութեան վրա տնկվեն ինձ ոչինչ անել չեն կարող. իմ ձայնը կհնչի անդադրում յանուն ճշմարտութեան: Արդարութիւն խաչելը նոր բան չէ: Արդարութիւն խաչողների տիպը և հոգին մի և նոյնն է անցեալում թէ ներկայումս. — զանազանութիւնը տարազների, ասպարէզների ու միջոցների մէջ է: Որքան կամենաք հաւաքեցէք ձեր ուժերը և խաչեցէք արդարութիւնը, խաչի վրայից կխօսի և խաչողների սև գէմքը աշխարհի առաջ կլուսաւորի: Խաչ տնկեցէք արդարութեան վրա. խաչի տակից կխօսի նա և այս ձայնը կլինի անհղ քարոզ խաչ տնկողների ամօթալի արարքի:

Բայց միթէ բարեմիտ, սրտացաւ, հասկացող մշակականը պիտի լռի, տեսնելով թէ ինչպէս արդարութեան խաչողը, ազատ քննադատութեան վրա խաչ տնկողը այսօր «Մշակն» է հանդիսանում, թէ ինչպէս նրեկայ խմբագրութիւնը «Մշակը» զարձնում է իրեն և իր անձերի օրգան, շահագործման աղբիւր և, որ ամենից ցաւալին է, արդարութեան գերեզման:

Չկայ Գրիգոր Արծրունին՝ «Մշակի» երկնողը—  
տէրը: «Մշակի» տէրերը—իմ կարծիքով—«Մշակի»  
հասցրած հասուն սերունդն է, «Մշակին» անվարձ  
աշխատակցողներն են և «Մշակն» իրենց վճարներով  
պահողներն են, այլ ոչ երբէք «Մշակի» վարձկան  
ներկայ խմբագրութիւնը:

Միթէ չէ հասել տակաւին այն ժամը, որ օդի  
մէջ ամենուրեք լավոյ դժգոհութեան ձայները միա-  
նան և ամենայն իրաւունքով իրրև բողոք ներկա-  
յանան «Մշակի» հրատարակիչներին և իրենց ձայնը  
լսեցնեն «Մշակը» այս վիճակից բարձրացնելու  
նկատմամբ:



ՊԵՏԱՍԻՍԱՆՍ Պ. ԼԷՑ-ԻՆ

(Տես. «Մշակ» 1901 թ. №№ 116, 117, 118)

Ես իմ՝ «Քահանայական խնդրի շուրջը» գրքի  
մէջ անց եմ կացնում այն միտքը, թէ քանի որ  
մեր այսօրվայ այլ ևս ժողովրդից չընտրվող եպիս-  
կոպոսների՝ կուսակրօնութեան առաջ գալու, ապ-  
րելու պայմանները, ձգտումները, գործելու եղա-  
նակները այլ են, իսկ ժողովրդից ընտրվող քահանա-  
յինը այլ, նրանք՝ առաջնորդները-եպիսկոպոսները չեն  
տալ ազգին՝ «լ ա լ, գ ի տ ո լ ն, շ ի տ ա կ բ ն ա լ ո-  
ր ո լ թ ե ա ն տ է ր քահանայ»\*: Ես գրել եմ. «կուսա-  
կրօն մեր հոգևորականութիւնը իսկապէս կաշխա-  
տի տալ ազգին ու եկեղեցուն արժանաւոր քահանա-  
ներ միայն այն ժամանակ, երբ ինքը տողորված  
կլինի առաքելական եկեղեցու հոգով, երբ իր բոլոր  
գործողութիւններն ու մտածողութիւնները կլինին թե-  
լադրված ժողովրդական-համայնական զգացումներից:  
Եւ այս կլինի նոյն իսկ մեր օրերում, եթէ վերադարձնեն  
ժողովրդին վիճակաւորների ընտրութիւնը\*\*): Սրա-  
նից յետոյ մէջ եմ բերել մեր եկեղեցական գործերի  
կառավարութեան վերաբերեալ բարձրագոյնս հաս-  
տատված օրէնսդրութեան միտքը:

Այժմ «Մշակ»-ը ծաղրում է իմ միտքը: Նա շեշ-  
տում է, որ օրէնքը «առաջնօրէն չանակելը

\*) «Քահ. խնդ. շուրջը» էր. 16

\*\*) Նոյն տեղ էր. 113

բացարձակապէս թողել է կաթողիկոսի իրաւունքին»: Թող բանայ օրէնքը անաշտ քրն- նագատութեան դատեր կարգացող «Մշակի» մշտական աշխատակից Լէօն և ցոյց տայ այդ բացարձակա- պէսը, այդ օրէնքը:

Նա գրում է. «Պօլօթենիէն բացարձակ անուանում է այն եկեղեցական պաշ- տօնեաներին, որոնք ընտրվում են. դը- րանց մէջ չկայ առաջնորդը»: Բայց դը- րանց մէջ կան դպրոցական հոգաբարձուները, տեսու- չները, հաշետես յանձնաժողովները և վերջապէս նոյն- իսկ քահանաները:

Պօլօթենիէ-ի մէջ ընտրութիւն միայն յիշուած է կաթողիկոսի ու երեսփոխի վերաբերութեամբ:

Բանանք օրէնքը. Հատ. Ժա հրատ. 1896 յօդ. 1111 (գրքիս մէջ առնված է 1857 թ. հրատ. յօդ. 907.) «Հայ լուսաւորչեան եկեղեցու աստուածալաշտութեան կատարումը և հոգևոր գործերի կառավարութիւնը պատկանում է նրա հոգևորականութեանը այդ եկե- ղեցու օրէնքներին և աստիճանակարգու- թեան հիման վրա»: Յօդ. 1117. «Հայ լուսաւոր- չեան եկեղեցու գլխաւոր կառավարութիւնը հոգևորա- կանութեան վերաբերմամբ ու բարձրագոյն վերսակո- ղութիւնը և այս դաւանութեան կանոնների ու ծէսերի ճիշտ գործադրութիւնը պատկանում է էջմիածնի կա- թողիկոսին, ինչպէս հայկական ազգի ծայրագոյն պատ- րիարքին»:

Օրէնքի այս 2 յօդուածի մէջ պարզորոշակի ճա- նաչված են մեր եկեղեցու հիմնական օրէնքը, աստի- ճանակարգութիւնը, կանոններն ու ծէսերը: Այս օ- րէնքների հիման վրա է, որ 1118 յօդ. ասում է. «էջ-

միածնի ծայրագոյն պատրիարքը ընտրվում է հայ լուսաւորչեան դաւանութեան պատկանող ամբողջ հայկական ազգից սրա համար օրինադրված կարգով: Հայոց հայրապետի ընտրութիւնը բղխում է հայոց եկեղեցու օրէնքները, կանոնները պետութեան կող- մից ճանաչելուց և չէ այն մի առանձին շնորհ ու բացառութիւն, իսկ եթէ այդ ընտրութեան համար սահմանվում է յատուկ կարգ՝ պատճառն, անկասկած, այն է, որ ընտրութեանը մասնակցում է այլ և այլ պետութիւնների մէջ գտնվող ամբողջ հայ ազգը: Ա- հա այդ 1111 և 1117 յօդուածների հիման վրա է, որ կատարվում է այլ և այլ հաշետեսների, դպրոցական հոգաբարձուների, տեսուչների, ծխական քահանանե- րի ընտրութիւն. սրանց թւում ինչո՞ւ չպի- տի կատարվի և առաջնորդների ընտրու- թիւն:

Չգիտեմ, ինչո՞ւ պիտի յատուկ յիշատակութիւն լինէր առաջնորդի ընտրութեան մասին, քանի որ ա- ռաջնորդն էլ նոյն հայ եկեղեցու պաշտօնեայ է, ինչ- պէս և քահանան, որի ընտրութեան մասին թէև նոյն- պէս յատուկ յիշատակութիւն չկայ, բայց այսօր էլ նա ընտրվում է ծխից: Չեմ հասկանում, ինչո՞ւ պիտի մեր եկեղեցական օրէնքների, կանոնների հիման վրա պետական օրէնսդրութիւնը ճանաչի հայրապետի ըն- տրութիւնը, մեր եկեղեցին պիտի պահի քահանայի ընտրութիւնը, իսկ կորցնի առաջնորդական ընտրու- թեան իրաւունքը: ԲԱՅՅ ՕՐԷՆՔԻ ՄԷՋ ՅԱՏՈՒԿ ՅԻՉԱ- ՏԱԿՈՒԹԻՒՆ ԿԱՅ ԹԷ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐԸ ՉՆՆ ԸՆՏՐ- ՎՈՒՄ:

Պետական օրէնքը թէ հայրապետի, թէ առաջ- նորդի և թէ քահանայի պաշտօնի տիրանալու մասին

մի և նոյն բառն է գործ զնուս: Յօդ. 1126. «Թագաւոր Կայսրը նշանակելով Հայկական ազգի էջմիածնի ծայրագոյն պատրիարք կաթողիկոսին, ամենողորմածարար...»: Յօդ. 1169. «Հայոց եկեղեցու թեմակալ առաջնորդները նշանակվում են Թագաւոր Կայսրից» (այլ ոչ կաթողիկոսից, ինչպէս գրում է պ. 1էօ): Յօդ. 1204. «Հայ լուսաւորչեան եկեղեցու սրբազնագործ պաշտօնեաները (քահանաները և այլն)... նշանակվում են իրենց պաշտօնների մէջ և օժիւում ու ձեռնադրվում են թեմակալ առաջնորդներից»: Հետևապէս՝ երբ նշանակել բայը գործ է գրվում ազգից ընտրված հայրապետի համար, գործ է գրվում ծխից ընտրված քահանայի համար, ինչն պիտի նոյն բայը ընտրու թիւնը վերջացրած լինելու գօրու թիւն կամ միտք ստանալ առաջնորդի համար: Պետական օրէնսդրութեան 1131 յօդ. ասում է. «էջմիածնի պատրիարքը, ինչպէս հայկական ազգի գլխաւոր հոգեւոր հովիւ, ձեռնադրում է հայ եկեղեցու թեմակալ առաջնորդներին և այլ բոլոր եպիսկոպոսներին, հսկելով ընդ նմին, համաձայն եկեղեցու հին կանոններին, որ թեմ շունեցող եպիսկոպոսների թիւը չլինի մեծացած առանց ակներև կարիքի», իսկ 1141 յօդ.-ի 10 կէտը սինողին վերապահում է իրաւունք՝ «յայտնել իր կարծիքը, երբ հայրապետը եպիսկոպոսական աստիճանի է արժանացնում հոգեւորականներին առանց սրահետ միասին յատկացնելու նրանց թեմակալ առաջնորդութիւն»: Այս յօդուածներից երևում է, որ եպիսկոպոսները պիտի ձեռնադրվեն թեմերի վրա, որ հայոց հայրապետը շարտի անպաշտօն եպիսկոպոս ձեռնադրի, որ եպիսկոպոսա-

կան աստիճան տալու մէջ բացարձակ ինքնիշխան չէ հայրապետը. այլ նա պիտի հարցնի սինողի կարծիքը, երբ ձեռնադրում է եպիսկոպոս ոչ թեմի վրա, այլ՝ զիցուք, վանահայրութեան, աւագ լուսարարութեան, ձեռնարանի տեսչութեան վրա և այլն, իսկ թեմի վրա եպիսկոպոս ձեռնադրելու սինողը շունի խառն վերու կամ կարծիք տալու պաշտօն: Ինչն, որովհետև մեր եկեղեցու կանոններով այդ կարծիք, վկայութիւն տալը - ընտրու թիւնը՝ կատարում է թեմը: Թէ պետական օրէնքը և թէ մեր եկեղեցականը չեն ճանաչում անպաշտօն եպիսկոպոսութիւն:

Ահա ես այսպիսի յօդուածներ ու հիմունքներ եմ ունեցել առաջնորդական ընտրութիւնը ժողովրդին դարձնելու միտքը գրքիս մէջ անցկացնելու համար, իսկ այսօրվայ «Մշակ»-ը ինչ օրէնսդրութիւնից է քաղել այս միտքը ծաղրելու իր հիմունքները՝ և «օրէնքը առաջնորդ նշանակելը բացարձակ պէտք է կաթողիկոսի իրաւունքին» խօսքերը:

Ինչ վերաբերում է առաջնորդների պատասխանատուութեան խնդրին թեմացիների առաջ՝ այդ նոյնն է, ինչ որ կաթողիկոսինը իրեն ընտրող ազգի առաջ քահանայինը՝ իր ծխի առաջ: Պետական օրէնսդրութեամբ ճանաչված մեր եկեղեցական օրէնքները այդպիսի պատասխանատուութիւն եպիսկոպոսների վերաբերմամբ սահմանած են: Լաւ ուսումնասիրեցէք այդ կանոնները, փոխանակ մօզա դառած՝ «հին», «փրտած», «կորած - մոլորած» անուանելու նրանց:

«Մշակ», ընտրողական սկզբունքի այս մշտական պաշտպանը՝ չզիտեմ ինձ դէմ անպատճառ ներհակը խօսելու թէ Արիստակէս եպիսկոպոսին անսխալական հանդիսացնելու ձգտումից չի քաշվում իր ընթերցողներից, մոռանում-ուրանում է մի վայրկեան իր դաւանանքը և հեզնում է ընտրողական սկզբունքը, գրելով. — «Ահա կաթողիկոսը ընտրվում է ազգի կողմից... բայց... Թիւրքիայում առաջնորդները հիմա էլ ընտրվում են և ինչ, քահանայական հարցը այնտեղ լուծված վերջացած է»: Միթէ հարկ կայ այսպիսի հարցեր դնելու, քանի որ պատասխանը պարզ է. եթէ առհասարակ ընտրութեան հետեանքը վատ է, մեզաւորը ընտրողներն են, որ ընտրութիւնից առաջ անաչառ ու խիստ քննադատութիւն չեն անում և ընտրելու ժամանակ ընտրութեամբ չեն քուէ տալի: Ուսումնասիրեցէք մեր ընտրութիւնները, և միթէ կարելի է այդ գործողութիւնները անուանել ընտրութիւն: Կուսակցական կոյր գովասանք կամ անարգանք՝ ահա այսօրվայ մեր քննադատութիւնը և «անպատճառ մեր մարդը» ահա այսօրվայ մեր ընտրողների ձգտումն ու նպատակը: «Բաւական է», գրում է «Մշակ», լաւ միտ առէք, բաւական է, որ առաջնորդները, սինօգր լինին սրտացաւ, հասկանան ժողովը զբոսի շահերը, մոռանան իրենց գրեպանները, մի խօսքով անձնանուէր, անարժատ թ հովիւներ լինին, և հարցը ինքն ըստինքեան կգտնէ իր լուծումը»: Է՛վրիկա, շնորհաւորում եմ: Բայց ինչպէս պէտք է անել, որ առաջնորդները հետզհետէ այդպիսի արժանիքների տէր մարդիկ լինին: Ընտրութեամբ կարելի է հասնել այդ արդիւնքին թէ կարգելով: Եթէ կարգելն աւելի

29

լաւ միջոց է, էլ ինչ կանչվաւոր է, հարայ հրոյց նշանակովի տեսուչների, լիազօրների դէմ: Եւ վերջապէս երբ ուշքի գալով Լէօ գրում է ու խոստովանում՝ «ընտրողական սկզբունքը, այն, ամենաարդարն է վարչական սիստեմների մէջ», էլ ինչ աւելորդ շանգրտոցներ ու գլուխ թակել է հարկաւոր:

Ո՛վ է ասում՝ «ընտրողական սկզբունքը վերացնում է պաշտօնեանների բարեխղճութեան հարցը», որ դուք ծեծում էք Արիստակէս սրբազանի համար այնքան դուրս յցած ձեր կուրծքը. բայց որ այդ սկզբունքը՝ աւելի ուղիղ միջոց է բարեխիղճ պաշտօնեաններ տալու՝ սրան հօ չի կարելի հակառակել:

Լէօ գրում է. «որ Արիստակէս եպիսկոպոսը թարգմանել է Ջօն Վիլիամ Դրէպէրի՝ «Եւրոպայի քաղաքակրթութեան պատմութիւնը», դա միայն պատիւ կարող է բերել նրան. մանաւանդ իբրև մի հոգևորականի: Բայց նշանակում է դա թէ Դրէպէրը հեզնութեան առարկայ պիտի դառնայ Բաթումի հայ քահանայի համար. Ո՛չ. Դրէպէրի գիրքը պէտք է կարգալ, միշտ կարգալ, եթէ կարելի է նոյն իսկ անգիր անել»: Կաւելացնեմ, այդ ամենը, նոյն իսկ և թարգմանելը դարձեալ շատ քիչ է. այլ պէտք է և, մարտի, իւրացնել: Ապա թէ ոչ թարգմանել Դրէպէրը և գալ ասել թէ կրօնափոխութեան պատճառները, բանտերը հայ արգելականներով լցվելու պատճառները, ժողովրդի մտաւոր ու բարոյական գործի հարիւր տարով յետ գնալու պատճառները միայն քահանաներն են — ահա այդ է որ կնշանակի Դրէպէրը թարգմանելով հանդերձ, հեզնել նրան, չհասկանալ նրան: Թարգմանել Դրէպէրը և գալ առանձին խնամքով աշխատասիրած և

լոյս հանած՝ «Քահանայական խնդրի» մէջ շեշտել, թէ հին ժամանակ քահանաները թէպէտ տղէտ էին, բայց իրենց բարեբարոյութեամբն ազդեցիկ էին, սա արդէն ոչ թէ հեզնել, այլ հայհոյել կնշանակի Դրեպէրին: Նրանք ազդեցիկ են եղել. որովհետեւ համեմատաբար աւելի գիտուն են եղել իրենց շրջապատողներինց. այլապէս՝ կարող է արդեօք երբ և իցէ, ուր և իցէ տղէտը ազդեցիկ լինել: 25 որ տղէտ մարդու բարեբարոյութիւնը անգիտակցական է, ինչպէս և երեխայինը: Կարող է արդեօք 30-40-50 տարեկան երեխան ազդեցիկ լինել այն պատճառով, որ նա բարեբարոյ է: Այո, միանգամայն համաձայն եմ 1էօ-ի հետ, որ Դրեպէրին հեզնողը, կաւելացնեմ՝ ինչպէս և ցոյցի տեղ ծառայացնողը, չէ կարող անպատիժ մնալ:

9. 1էօ Մագարէջօ գիւղի քահանային պատժելու մասին գրում է. «Մեսրոպ քահանան, ժողովրդասէր ձևացող մարդը, ասում է թէ Արիստակէս եպիսկոպոսը խայտառակել է քահանային, արհամարհել է նրա քահանայութիւնը և վազում գտնում է հնութեան փոշիների մէջ ինչ-որ Բարսղի կանոնները և դուրս է հանում այնտեղից հետևեալ գոհարը. «Քահանայ թէև կարի անարգաց ոք իցէ, որ անարգէ և որ արհամարհէ՝ գաստուած արհամարհէ»: Նախ՝ դեռ ես իմ գրքի յառաջաբանում ընթերցողներին խնդրել եմ ի նկատի ունենալ, որ ես նայել եմ ինդիքների վրա կանոնական տեսակետից, չառնելով ի նրկատի նոյն իսկ իմ ներքին կարծիքները կանոնի ժամանակակից թէ հնացած լինելու մասին: Ուրեմն՝ ես չեմ քննադատել մեր եկեղե-

ցական կանոնները, այլ քննադատել եմ Արիստակէս եպիսկոպոսի քայլերը այն կանոնների հիման վրա, որ և ինքը՝ Արիստակէս եպիսկոպոսը՝ հիմք է ընդունում իրեն և իր դասանանքները պաշտպանելու համար: Երկրորդ՝ պ. 1էօ այդ կանոնը զիտմամբ վերադրում է միայն Բարսղին, զիտմամբ չէ ասում որ առաքելոց կանոն է. որովհետև իրաւունք չէր համարիլ առաքեալներին «ինչ-որ» անուանելու և հէնց այդ նպատակով «առաքելոց ից.» խօսքերը դէն է ձգում ազնւաբար: Այդ կանոնի հետ միատեղ կանոնադիրները սահմանել են, որ տղէտ, տխմար, քահանայութեան բոլոր ուսումը չուսած լինելու պատիժը պիտի կրի այդպիսի մէկին քահանայ ձեռնադրող եպիսկոպոսը (Յովհ. Մանդակունի), ինչպէս և այս մէջ է բերում ինքը Արիստակէս եպիսկոպոսը հէնց այդ գէպքի համար: Այս առթիւ կայ Թաղէոս առաքեալի, նոյն Բարսղի, Յովհ. Մանդակունու և այս կանոնը. «եպիսկոպոս մի գտգէտս, գանարժանս մերձեցուցէ յաստիճանս վասն կաշառաց կամ ակնաուրթեան կամ մերձաւորութեան, որ յանցանէ զկանոնս՝ նզովեալ եղիցի և տացէ վրէժս յանմահ տանջանս»: Տեսնում էք, մեր եկեղեցու կանոնադրութիւնը տղէտ, անդրադէտ, անարգներինց մէկը եղած քահանային չէ պատժում, այլ նրան ձեռնադրող եպիսկոպոսին: Ուստի այս իմանալով, իմ կարծիքով, արդար և աւելի կանոնաւոր կլինէր վարված առաջնորդ Սեղրակեանը, եթէ խնդիր յարուցած լինէր, թէ ով է նրան ձեռնադրող եպիսկոպոսը և պահանջը, բողոքն ուղղէր այն եպիսկոպոսի՝ գէմ, թէկուզ եթէ այդ եպիսկոպոսը ժամանակի կաթողիկոսը լի-

նէր: Այն, այն ժամանակ Արիստակէս կհանդիսանար կանոնական բողոք բարձրացնող: Երբորդ՝ ս. Սեդրակեան գրում է. «Եթէ յառաջին ժամանակս տղէտք, անուամուներ էին քահանայք, գոնէ բարեբարոյ գնացիք... պատկառելի և... ազդեցիկ էին յաշս և ի վարս ժողովրդեան», և Սագարէջօ-ի քահանան էլ տղէտ, անուս, բայց բարեբարոյ է եղել, ուստի և՛ եթէ ս. Արիստակէս հաւատում էր իր ասածի ճշմարտութեան, չպիտի ենթարկէր նրան առաջնորդական իրաւունքների բոլոր ծանրութեանը: Խիստ աչքի է ընկնում, որ «Քահանայական խնդրի» հեղինակը իր թեմակալ առաջնորդ ժամանակ Տփլիսի հրէշ, թոկից փախած և այլ բազմաթիւ տղէտ քահանաներին չէ դադարացնում քահանայադործութիւնից, նրանց վրա չէ ծանրանում (գոնէ այդ չէ երեսում իր գրքում) իր առաջնորդական իշխանութեամբ, իսկ մի յետ ընկած բոլորովին վերախօս գիւղում մի խեղճ քահանայի վերաբերութեամբ ցոյց է տալի առանձին անհղութեամբ իր իշխանութիւնը: Թոյլ եմ տալիս ենթադրելու, որ այս քահանայի տգիտութիւնը առիթ է եղել այդպիսի ծանր պատժի ենթարկելու, այլ ոչ պատճառը, որ հաւանականաբար այլ բան կլինէր: Այս ենթադրութիւնն ինձ անել է տալի այն հանգամանքը, որ սրբազանի վարձունքը չէ եղել որոշ սիտանի արդէւնք, այլ մի պատահումնք:

«Հիմա տեսէք—գրում է պ. Լէօ—թէ ինչ է հասկանում Մելեան արժանաւոր խօսքերի տակ: Սկզբում նա ինքն իրեն հարց է տալիս. ինչ կնշանակէ արժանաւոր. ուսեան թէ հաւատաւոր, գիտուն թէ բարեբարոյ:» Այս խօսքերս գրված են գրքիս 27 երեսում:

«Մի այն 92 երեսում է պատասխանում—գրում է Լէօ—ի բայց հարցին: Նրա ընցեպտով՝ երբ մէկը ձեռնադրվում է քահանայ, պէտք է գիտենայ քահանայական գիտելիք այնքան, որքան անհրաժեշտ է քահանայ մարդուն»: Գրքիս 27 երեսում տուածս հարցերի պատասխանը չկարդալ նոյն երեսում, որ պարզ գրուած են, այլ 92 երեսի խօսքերի մէջ որոնել՝ անբարեմտութիւն չէ: Իսկ 92 երեսումն էլ ես պարզ բառերով գրում եմ. «տղէտը, թերուր չպիտի լինի քահանայ—վերջացաւ. հիմնաւորը սա է»: Զբաւականացած այսքանով բերում եմ ս. գրքից վկայութիւն. «Իւր գլխու թիւն մերժեցեր—ասում է Աստուած—մերժեցից և ես գրեց, զի մի քահանայացիս ինձ»: Սրանով էլ շբաւականացած, շարունակում եմ խօսքս՝ «ինչպէս բժիշկ լինելու համար գոյութիւն ունի մի որոշ դասընթաց, քանի որ մարդու կագմութիւնը մի և նոյնն է ամեն տեղ գիւղում թէ քաղաքում, այսպէս պիտի և մի որոշ դասընթաց լինի քահանաների համար»: Միթէ բժշկական դասընթացը, այսպէս և ս. գրքի ուսմունքը, քահանայական գիտելիքները կարելի է անցնել առանց յայտնի շափով ուսման պաշար ունենալու: «Մաշտոցի և տօնացոյցի գիտութիւնը» և սրանց դործադրութիւնը «Մշակի» ներկայ խմբագրութիւնն է, որ լաւ քահանայի համար այնքան բաւական է համարում, որ իր թղթակիցների միջոցով բողոքում է որ «պսակ, կնունք, թագում» \*) կատարող քահանային ծաղկեայ փիլոն չեն տալի առաջնորդները....

\*) Տես «Մշակ» № 84 ներկայ տարի:

Լէօն գրում է. «Արիստակէս եպիսկոպոսը կամեցել է մի չեզոք տեղ գտնել, առաջնորդների ազդեցութիւնից և անմիջական իշխանութիւնից ազատ մի միջավայր, ուր կարելի կլինի իսկական հարցաքննութիւն կատարել: Այդ տեղը նա համարել է Էջմիածնի ճեմարանը: Եւ անկասկած նրա մեղը չէ, որ Մելեան քահանան չէ հասկանում այս բոլորը»: Մեր օրինակելի արդարադատ քննադատը իմ անհասկացող լինելու այս շեշտը զարկում է զըրթիս մէջ յետագայ տողերը կարգալով հանդերձ. «Այն, տիրացուների հարցաքննութիւնը կոնսիստորիայից հանելը հաւասար է մատը հիւանդ տեղի վրա զնելուն» \*):

Լէօն առաջնորդների ընտրութեան խնդիր յարուցանելու համար գերեզմաններից հարայ հրոցով դուրս կանչեց նազարեանցներին, Արծրունիներին, Բաֆֆիններին, պօլօժենիէ-ին դիմեց. — բայց այս պօլօժենիէն իսպառ մոռանում է, երբ տեսնում է թէ ինչպէս տ. Արիստակէս իսպառ խլում է տիրացուների հարցաքննութեան իրաւունքը ձեռնադրող եպիսկոպոսից և տալիս է ճեմարանին: Նա փառաբանում է, չկամենալով հաշի տունել, որ այդ առաջարկը ուղղակի անիրագործելի է և հակառակ թէ պետութեան հաստատած ու թէ մեր ազգային եկեղեցու կանոններին: Օրինակելի արդարամտութիւն:

Համակրանքով վերաբերվելով տիրացուների հարցաքննութիւնը կոնսիստորիաներից առնելու մտքին, յայտնում եմ այն կարծիքը, որ քննութեան տեղերը, աւելի լաւ կլինէր, իւրաքանչիւր վիճակի թեմական դպրոցները լինէին: Որ թեմական դպրոցների վրա առաջնորդները վերատեսչութեան, վերահսկողութեան,

\*) «Քահ. խնդ. շուրջը» եր. 96

նախագահութեան իրաւունքներ ունին—սա ամենքին յայտնի է և օրէնքն էլ ճանաչում է. 1207 յօդ. «Էջմիածնի հայոց հոգևոր ճեմարանը գտնվում է Վեհափառ Հայրապետի զխաւօր իշխանութեան տակ, իսկ թեմական դպրոցները կախված են իրենց թեմական իշխանութիւնից»: Ուստի և գրում եմ. «Մրանց—առաջնորդների—նախագահութեամբ ուսուցիչները մի անգամ արդէն սահմանած ծրագրով կրննէին տիրացուներին, քահանայացուներին ու կտային իրենց վճիռը»: Որ թեմական դպրոցների ուսուցիչները կախված լինելով հանդերձ թեմական իշխանութիւնից, հեռու են կոնսիստորիաների անգամների նման բացարձակ ստորադրված լինելու նմանութիւնից, քանի որ հոգաբարձութիւն կայ, ուսուցիչներին ընտրող հաստատող իշխանութիւններ կան—այս ևս պարզ է: Ուրեմն թեմական դպրոցների վրա մատնացոյց անելով ուղեցել եմ տեսել, որ այնտեղ թէ հարցաքննութիւնները բուական անաչառ կլինեն ու թէ առաջնորդական իրաւունքները բուական պահված:

Բայց պ. Լէօ իմ խօսքերը դիտաւորութեամբ խարդախում — փոխում ու գրում է այսպէս «Մելեան ասում է, թէ առաջնորդը թեմական դպրոցի ուսուցիչներից կկազմէ մի մասնաժողով, որին կնախագահէ ինքը և կրննէ տիրացուին»: «Երբեմն» բառը քահանաներ ձեռնադրելուն վերաբերող խօսքերի մօտից «առաջնորդական պարտք» խօսքերի մօտ զնելս, որ մագաչափ անգամ միտքը չէ փոխում, քանի որ քահանայ ձեռնադրելը առաջնորդական պարտք է, քանի որ իմ ամբողջ խօսքն ու դիրքը քահանաների մասին է, Լէօ համարում է «անբարեխղճութիւն, ամօթալի, արատաւոր, միմիայն

զգուանք յարուցանող քաջագործութիւն», հապա եթէ այդ չափով չափենք իր վերն առաջ բերած վարձուները, որ իմ մտքից ու գրչից չանցած՝ «ուսուցիչներից կկազմէ մի մասնաժողով» իրենից յօրինում է և իբրև իմ գրած ներկայացնում, ասացէք անաշտ ընթերցողներ, նրա այս վարձուներին ինչ անուն, ինչ անուններ կտաք: Մի՞թէ գրանով նա ինքն իր ձեռքով իր բարեղիծութիւնը, արդարագատութիւնը սե շրջանակի մէջ գրած չէ լինում:

Խօսքերի, մտքերի անհիմն առատութեամբ պ. Լէօ կաշուից դուրս է գալի վերադրելու ինձ այլ և այլ վայնասուններ, կսկիծներ այն բանի համար, որ Արիստակէս եպիսկոպոս կենդանի թէ մեռած բարձրատիճանների արարքներ է մերկացրել: Այն, ես ասել եմ և պնդում եմ, որ նրանք, այն մերկացումները քահանայական խնդրի հետ բռնադրօսիկ են կապված, որ նրանք առաջադրված խնդրի նկատմամբ արժէքաւոր բաներ չեն: Աւելին չեմ ասել — թէ և շատ բան կարելի էր ասել: «Իսկ ժամանակակիցների վերաբերմամբ — գրում է Լէօ — Մելեան այն ունի ասելու (իր լեզուով ասեմ — սա ինչ «կլեաուզնի» ոճ է, ինչն էլ քա ստում այն, ինչ որ ասել եմ, քան թէ ասում էք այն, որ կարող եմ և շունենայ ասելու) թէ Արիստակէս եպիսկոպոսը կամեցել է այդ մերկացումներով իր անձնական հաշիւները տեսնել»: Եւ իր այս «ունի ասելով ասածը» համարելով իմ կողմից ուրիշ սրտինը կարգալու միջոց, անուանում է՝ «անագնիւ, անբարեխիղճ»: Ես կարգացել եմ ոչ թէ Արիստակէս եպիսկոպոսի սրտինը, այլ գրքինը, տպագրութեամբ լոյս հանածը: Նա իր գրքի սկզբներում

գրում է. «աւելորդ չենք համարում ներկայ աշխատութիւնս» («Քահ. Խնդիրը») սկսել այն օրից... երբ առաջին անգամ այդպիսի խնդիրներ ծագումն առան մեզ համար. նորանից յետոյ անցնել այն բոլորին, ինչ որ մեր պարտքը թելադրել է մեզ անել: Կարծում ենք, որ այսպիսով ընթերցողներին միջոց տուած կլինենք աւելի ճիշտ հասկացողութիւն կազմելու այն անհամաձայնութիւնների մասին, որոնք տեղի ունեցած են հոգեոք բարձրագոյն իշխանութեան ներկայացուցիչների և մեր մէջ տասնեակ տարիների ընթացքում»: Ես այս տողերը համարել եմ «անձնական հրտապարակական հաշիւութիւն (այլ ոչ հաշիւ տեսութիւն կամ հաշիւներ տեսնել (\*) այն բոլորի, ինչ որ սրբազան Արիստակէսի պարտքը թելադրել է անել»: Արդեօք սա սրտի կարգալ է, թէ տպուած — գրուածի:

Եթէ ես ոչ թէ սրտի, այլ գրքի այլ և այլ երեսներից — Լէօ-ի սխտեմով — ծագկաքաղ անէի ո՛չ նրանման քմածիւն, այլ շատ հաւանական եզրակացութիւններ դուրս բերելու համար, հանդէս կղնէի — օրինակի համար — ահա այս տողերը. «Յիսալ կլինէր — գրում է Արիստակէս եպիսկոպոսը իր գրքի 24 երեսում եթէ քահանայական խնդրում երևան եկող ապօրինութիւնների և վնասակար սովորութեան մա-

\*) Ծանօթ. — Հաշիւութիւն եւ հաշիւտեսութիւն երկու ծայրերով միմեանց ներմակ հասկացողութիւն են. չը նայած սրան՝ Լէօ, այս Հերբիլէս քննադատը — իմ հաշիւտեսութիւնը հաշիւտեսութիւն, հաշիւներ տեսնել է շինել եւ իմ բերանը գրել, իշրել իմ գրած ներկայայրել... շին ու նոր խաչ հանողների, խաչ դնողների յաւիտենական արհեստ...

սին միայն խօսելով նորանից զատած լինելինք ազգին ոչ պակաս մտահոգութիւն և վիշտ պատճառող շարիքները— վանքերի և նոցա կալուածների ցաւալի վիճակն, եկեղեցական բարեկարգութեան խանդարումներն և առհասարակ եկեղեցական - վարչական գործերում տիրող թերութիւններն ու գեղձումները:.....

Եկեղեցական վարչութեան բարեկարգ կազմակերպութիւնը կախուած է հայրապետի հասկացողութիւնից և տրամադրութիւնից. ուրեմն պէտք էր ընտրել այնպիսի հայրապետ, որ լուծուի տար պահանջներին»: Եւ որպէս զի հայոց ազգը ապագայում սխալ ընտրութիւն չանի, ս. Արիստակէս՝ ամբողջական անուն ազգանուններով հանդէս է դնում ուստահայքի այսօրվայ բոլոր աչքի ընկնող եպիսկոպոսներին իրենց կատարած սև գործերով: Եթէ աւելացնենք սրա վրա, որ ինքը, Սեղրակեան սրբազանը, բացի վերն առաջ բերած տողերից, իր գրքի սկզբներում և վերջերում իրեն կուսակից է յայտարարում ժողովրդին աշխարհաբար Աւետարան տալուն, այրի քահանաներին կրկին ամուսնութեան իրաւունք չնորհելու և ոռճիկներ կապելու խնդիրներին և այն ամենի հետ իր գրքով ցոյց է տալի, որ եթէ ինքը մինչև այժմ շատ բան չի կարողացել անել է որ չնորհիւ բարձրից եկած հրամանների, է որ կաթողիկոսների ու սինոդի ապօրինի ու ոչ լաւակամ կարգադրութիւնների.... թող ասեն ընթերցողները— ինչ եզրակացութիւն կարելի է գուրս բերել այս բուրբից:

Աստրախանի կոնսիստորիան «Մշակ»-ի մէջ տրպված յայտարարութեամբ քահանայացուներ է հրա-

ւիրել թեմի համար: 9. 1էօ գրում է. «Մեկեան ասում է, թէ այդ միջոցով քահանաների ընտրութիւնը ընկնում է կոնսիստորիաների և առաջնորդների ձեռքը: Ունի նա փաստեր Աստրախանի առաջնորդի վերաբերմամբ»: Ես հիմի էլ պնդում եմ, երբ բաց տեղերի համար հրաւեր կարգացողը կլինի կոնսիստորիան, խնդիրներ տուողներից առաջին ընտրութիւն անողը և ժողովրդին առաջարկողը կլինի կոնսիստորիան — այսպիսով քահանաների ընտրութիւնը իտպառ կանցնի կոնսիստորիաներին: Ինչ փաստ պիտի ունենամ Աստրախանի առաջնորդի վերաբերմամբ, երբ ես գրքիս մէջ գրում եմ. «մի ըոպէ ենթարդենք ու հաւատանք, որ Աստրախանի կոնսիստորիան ի շարք չի գործ գնիլ իր ստանձնած նոր դերը քահանայացուների խնդրում, քանի որ նրա ղեկավարն է Արիստակէս եպիսկոպոսը»: Ես պարզ խնդիր եմ լուծում, այլ ոչ անձնաւորութեան պատիւ եմ շօշափում:

69121

9. 1էօ «շատ գեղեցիկ» է գտնում և միանգամայն համաձայն է գրքիս մէջ իմ յայտնած այն մտքերին թէ՛ «մի քահանայի առնել իր եկեղեցուց տանել մի այլ եկեղեցի՝ նոյնն է, ինչպէս որ մի փեսայի առնել իր հարսից և տանել տալ մի այլ հարսի: Այսպէս ուրեմն քահանայի ընտրութիւն չկայ»: Իսկ եթէ զանք ասենք, որ Արիստակէս եպիսկոպոսը այդպիսի շատ շատ փեսաներ առել է նրանց հարսներից և տուել է այլ հարսների, նոյն 1էօն կրակ կկտրի և իմ մտքերին ո՞վ գիտէ ինչ ինչ անուկներ կտայ և այլ և այլ բացառիկ պայմաններով ինչպէս Սեղրակեան սրբազանին կալաշտանի:



Գարով իմ քահանայանալուն և Բաթում ծուխ ստանալուն, 1էօ գրում է. «Վերջին 20—30 տարվայ պատմութեան մէջ, կարծեմ, միայն մի դէպք է եղել, երբ մէկը քահանայ է ձենադրվել ոչ թէ ժողովրդի համար, այլ քահանայութեան հետան միջական կապ չունեցող մի պաշտօնի համար: Եւ այդ մէկը եղել է Մեսրոպ քահանայ»: Պ. 1էօ շարունակելով խօսքը, հարցնում է. «չէ որ դուք արդէն քահանայ էիք, երբ ձեզ ընտրեցին Բաթումի քահանայ, ինչու յանձն առաք այդ պաշտօնը»: Բայց պ. 1էօն, ի հարկէ, չի կարող ասել, թէ իմ եկեղեցին թողիցի ու Բաթումինը յանձն առայ, թէ ես իմ հարսը թողի և նոր հարսի հետ ապօրինի կենակցութեամբ կապվեցի: Իմ տեսչական պաշտօնի վրա ձենադրվելու մի քիչ նման է՝ մեր օրէնքով օտար հարսի հետ կապվելու և այս օտարի մահուամբ (դպրոցների փակում) հարազատ հարս ունենալուն: Չնայած սրան՝ դարձեալ ես հրապարակով խոստովանում եմ, որ իմ քահանայանալը արդարև եղել է ընդունված կարգերից դուրս, բայց ոչ թէ՛ «քահանայութեան հետ անմիջական կապ չունեցող մի պաշտօնի համար», այլ օրինական մի նոր պահանջի գոհացումն տալու համար: 1176 և 1187 յօդուածներին իբրև յաւելուած բարձրագոյն հաստատված կանոններից 8-րդ կէտն է. «Թեմակալ առաջնորդը ունի իրաւունք, եթէ ցանկանայ, յանձնելու եկ.—ծխ. դպրոցների վրա հսկողութիւնը մի տեսչի, որ կնշանակվի բացառապէս իր թեմի ամենայուսալի հոգևոր պաշտօնեաներից»: Ահա այս պաշտօնի համար ինձ քահանայ օրհնելու հայրապետական կոնդակն արձակվեց առանց իմ կողմից ինդիք անելու և մինչև անգամ առանց իմ վեր-

ջնական համաձայնութիւնը տուած լինելու: Ես չբարոզացայ և չկամեցայ հայրապետական կոնդակին չհնազանդել: Այնպէս է, ես չեմ եղել ծխից ընտրված, բայց չեմ եղել և ծխի վրա նշանակված: Գպրոցների փակվելուց յետոյ Տփլիսում մի տարի և չորս ամիս անագին ընտանիքով մնացի պարապ—յուսահատական վիճակի մէջ, բայց ընտրողական սկզբունքին կարողացայ մնալ հաւատարիմ: Սինոդն այդ ժամանակ, առանց իմ դիմելուն, նշանակեց ինձ ժամանակաւոր հովիւ Տփլիսի վանքի եկեղեցու վարձանուած Գէորգ քահանայի տեղ. տուեց ձեռքս յատուկ հրաման. բայց ես ոչ միայն հետամուտ չեղայ ստանալու այն տեղը, այլ և գրեցի ս. էջմիածին բարձրաստիճաններից մէկին.— «Հովիւ, որ ոչ մտանէ ընդ դուռն ի դաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ, նա գող է և աւազակ»: Դուռը ժողովրդի ընտրութիւնն է. ես նշանակովի հովիւ չեմ կարող լինել»: Եւ չեղայ: Ստացայ հրաւէր Բաթումից, տուի համաձայնութիւնս և ընտրվեցի գրեթէ միաձայն ամբողջ հայ հասարակութիւնից: Եւ այսպէս՝ ես քահանայ էի, բայց չունէի ծուխ—եկեղեցի, Բաթումը ծուխ—եկեղեցի ունէր, չունէր հաստատ քահանայ—եղածները ժամանակաւոր և նշանակվածներ էին եղել: Ահաբայ մնացած քահանայիս անփեսայ Բաթումն ընտրեց և հայրապետն էլ այս ընտրութիւնը կոնդակով օրհնեց— հաստատեց: Թէ որպիսի մեծ կանոնազանցութիւն եմ գործել—թող դատեն այժմ ընթերցողները:

Պ. 1էօ մեծ գովեստով խօսելով սինոդին ուղարկած Արիստակէս եպիսկոպոսի 60 երեսանի յայտարարութեան մասին, գրում է. «Մելեան քահանան

այդ ընդարձակ գրութիւնից դուրս է գջլել մի քանի նախադասութիւններ և դրանց վրա լարախաղաղութիւններ է անում: Տեսնենք ո՞վ է լարախաղացը: «Այդ գրութիւնից—չարունակում է նա—Մեսրոպ քահանան պիտի տեսնէր, թէ որպիսի անկարգութիւն է տիրում մեր հոգևոր գործերի մէջ, թէ ինչպէս բացակայում է այնտեղ հաստատ, որոշ, ամենքի համար պարտաւորական օրէնքը, որի տեղ թագաւորում է քմահաճութիւնը, մանր քինախնդրութիւնը»: Չստ լաւ: Բարեխիղճ ընթերցողը գրքումս կտեսնի, որ ես այդ ամենը խոստովանել եմ: Բայց ինչո՞ւ է Սեղրակեան «այդ մեծ գրութիւնը» կազմել. որպէս զի իրեն արդարացնի այն մեղադրանքների դէմ, որի համար կաթուղիկոսն ու սինոդը յանդիմանութիւն են կարգում նրան: Գուք, պ. Լէօ, երբ ընդունում էք, որ «այդ մեծ գրութեան» մէջ հանդէս հանված բոլոր փաստերը ապացոյցներ են անկարգութեան, քմահաճութեան, մանր քինախնդրութեան, իսկ պարզ է որ այդ ամենը ս. Սեղրակեան դուրս է բերել իրան արածը այդ անկարգութեան, անկանոնութեան, փաշայական քմահաճութեան, մանր քինախնդրութեան բազմաթիւ օրինակներով արդարացնելու համար, այն ժամանակ միթէ այլ ևս տեղիք կմնայ կասկածելու, որ Արիստակէսն ևս այն օրինակներին հետևելով, Մակարի նոյն անմխիթար գործունէութիւնն է շարունակել: Այս ակներև փաստերը և վարմուքները տեսնելով, միթէ ես լարախաղացութիւններ եմ անում, գրելով. «ակզրունքի տէր, շիտակ, խելահաս մարդիկ (ինչպէս սիրում էինք ճանաչել Արիստակէս եպիսկոպոսին) երբ և իցէ կհետենն անսկզբունք, անզոյն ու երկշոտ գործիչներին (ինչպէս ընդունված էր ճանաչել

Մակարին): Կամ միթէ լարախաղաղութիւններ եմ անում, գրելով. «Միթէ մէկի յանցաւորութիւնը իրաւունք է տալիս մի ուրիշին ևս յանցագործ լինելու»: Գուք չէք արգիօք լարախաղացին նմանվում, բացականչելով. — «Ինչ յանցանք, ինչ յանցագործ: Հաստատել է Մելեանը թէ Սեղրակեանի արածը յանցանք է»: Տէր Աստուած, պարոն, դուք «այն մեծ գրութեան» մէջ հանդէս գրվածները ընդունում էք անկարգութեան, փաշայութեան, քինախնդրութեան, քմահաճութեան ապացոյցներ, իսկ Արիստակէսի նոյնանման արածները մեծագործութիւններ .... Օրինակելի բարեմտութիւն:

9. Լէօ Մակար կաթուղիկոսի վարմունքը, որ յանդիմանութիւն է կարգացել Արիստակէսին ինքնազուլս քահանայ ձեռնադրելու համար, չհայած որ ինք էլ է ձեռնադրել իր առաջնորդ ժամանակ փաշայութիւն է համարում, տեսելով. «Ինչ ես եմ արել լաւ է, ինչ դու ես անում՝ վատ»: Բայց ես պնդում եմ, որ Մակարը յանդիմանելով Արիստակէսին, ընդ նմին յանդիմանում է իրեն իր առաջնորդական նոյնանման արարքների համար. «Ես էլ եմ արել, նոյնպէս վատ եմ արել և—եթէ իմ ժամանակուայ կաթուղիկոսը ինձ չէ յանդիմանել, այդ չի նշանակում թէ ես ևս պիտի քեզ չյանդիմանեմ»— ահա ես ինչպէս եմ մեկնում Մակարի արած յանդիմանութիւնը:

Արիստակէս եպիսկոպոս եօթնօրվայ ամուսնացածին քահանայ է ձեռնադրում. կաթուղիկոսը յանդիմանում է. Սեղրակեան իր արածը չի պաշտպանում իբրև իր համոզմունքի, իր լուսամիտ հասկա-

ցողութեան արդիւնք, այլ հարց է տալի. «եկեղեցական կանոնս զո՞յ արդեօք արգելումն ձեռնադրութեան նոր ամուսնացելոյ—գոնէ իմ չիք հանդիպեալ, իսկ առաքելականն թուղթ ծանուցանէ. «պատուական է ամուսնութիւն և սուրբ են անկողինք նոցա»: \*) Ես էլ եկեղեցական կանոնների անունից խօսող սրբազանին ասում եմ, որ այն, կանոն կայ և դուք էլ գիտէք: Առաքեալը, եթէ ամուսնութիւնն ընդհանուր առմամբ սուրբ է անուանում, նոյն առաքեալը սարկաւազ ու քահանայ ձեռնադրվողի համար պահանջ է դնում, որ նա պիտի զաւակաց հայր լինի. ուրեմն և ոչ նոր պսակված: Ես խօսք անգամ չեմ ասում այս կանոնի լաւ թէ վատ լինելու մասին: Ս. Արիստակէսը կանոնից է խօսում. ես կանոն եմ ցոյց տալի: Իմ բերած առաքելական կանոնը հին է, փրտած է, անմիտ է: Հապա ինչո՞ւ չէք բարկանում և հայհոյում Արիստակէսին, որ իրեն արածն արդարացնում է նոյն առաքեալի խօսքերով, այլ ոչ իր Գրեպէրանման հասկացողութեամբ:

Արիստակէս եպիսկոպոս գրում է. «մենք հարկադրուած ենք եղել երբեմն վարվելու նախնաւանդ եկեղեցական կանոններով, որպէս զի կարողութեան չափ հատուցած լինինք մեր առաջնորդական պարտքը դէպի հօտը»: \*) Այս առթիւ նկատում եմ. «բայց ինչ ասել է առաջնորդ, որ երբեմն է մտածում հատուցանելու իր առաջնորդական պարտքը դէպի հօտը»: \*\*) Գ. Լէօ զայրանալով և՛ պատուէր է կարդում, և՛ հարցում տալի. «Այդ հարցը թողէք, տէր

\*) «Քահ. խնդ.» եր. 42—43

\*\*) «Քահ. խնդ. շրջ.» եր. 25.

հայր, դատաւորը դուք պիտի լինիք»: Սա արդէն Լէնկղիմուրեան եսապետութիւն է: Բայց ինչո՞ւ դուք պիտի լինիք, պ. Լէօ: Այդ է ձեր ազատամտութիւնը. զա՛՛ գրական շինդիդիսանութիւն չէ արդեօք: Այդպէս էք պաշտում Արծրունու ազատամիտ «Մշակ»-ի ուղղութիւնը: Դա ինչ ո՞ճ է, ինչ լեզու, ինչ վարմունք: Ի՞նչպէս է, որ մամուլի մէջ եպիսկոպոսը դատաւոր կհանդիսանայ հայրապետի պաշտօնական արարքների «ապօրինի» \*) անուանելով սրանց, իսկ քահանան չի կարող լինել դատաւոր եպիսկոպոսի գրական վաստակների: Օ՛ որքան պարզ մերկացնում էք ձեր բարոյական ու գիտական աշխարհները այդ մի փոքրիկ դարձուածով:

Գործերը սինոդ ուղարկված տգէտ տիրացուներին մի առ ժամանակ ուսուցիչների յանցնելը ես համարել եմ ընծայարան բանալ: Գ. Լէօ այս առթիւ գրում է. «ինչ նմանութիւն կայ մի փոխանորդ վարդապետի անճարութիւնից գործադրած այս ժամանակաւոր միջոցի և մշտական հաստատութեան, սիստեմի բնաւորութիւն կրող ընծայարանների մէջ»: Զանազանութիւնը՝ մէկի ժամանակաւոր, միւսի մշտական լինելու մէջ է, բայց որ ամեն առաջին փորձ ժամանակաւոր է լինում և սիստեմի տակ չզրված—այս էլ պարզ է: Բայց ինչ ասել է «փոխանորդ—վարդապետի անճարութիւն»: Գ. Լէօ գրում է ս. Արիստակէսի մասին թէ նա «միշտ բողոքաւոր է եղել»: Ես չեմ հաւատում: Նա եթէ միշտ բողոքաւոր լինէր՝ չէր թագնվիլ «փոխանորդ վարդապետի անճարութեան» ողորմելի՛ գրահի տակ. նա

\*) «Քահ. խնդ.» եր. 102:

եթէ իբրև փոխանորդ — վարդապետ քահանայ ձեռնադրող չի եղել, բայց իբրև փոխանորդ — վարդապետ տգէտ քահանայացուների գործը սինող ուղարկող է եղել: Նա՝ «մշտական բողոքաւորը» պարտաւոր էր բողոքելու, պաշտօնից հեռանալու, այլ ոչ տգէտների գործին ընթացք տալու թէկուզ բարձրից եկած հրամանով: Բայց չէ բողոքել. ինչո՞ւ. որովհետև վարդապետ է եղել, միտք ունէր եպիսկոպոս դառնալու, թէ որովհետև դիմացը Գէորդ կաթուղիկոսի նման խիստ, կտտ Լէօ-ի շեշտով ասեմ՝ «պատժող ու վարձատրող» կաթուղիկոսն էր — վախում էր նրանից: Կարծեմ՝ երկու պատճառն էլ գովական չեն:

Լէօ գրում է. «Այսպէս է և այն ակնարկութիւնը, որի միտքն է հասկացնել թէ եպիսկոպոսական աստիճան Արիստակէսը ստացել է Գէորդ կաթուղիկոսից իբրև վարձատրութիւն տգէտ քահանաներ բազմացնելու մէջ նրա ցոյց տուած եռանդի համար»: Համաձայնեցէք, որ Գէորդ կաթուղիկոսի նման մարդը եպիսկոպոսական աստիճան չէր տալ իր հրամանները խոնարհօրէն չկատարող կամ իր հրամանների դէմ բողոքող վարդապետին: Իմ գրածը ակնարկութիւններ չեն, այլ պարզ հետեոգութիւն են ս. Սեղրակեանի իր ասածներին: Նա Գէորդ կաթուղիկոսին բացարձակապէս անուանում է արծաթաւոր, տգէտ քահանաների ծաւալն աւելացնող, իսկ իր մասին գրում է, որ մի փոխանորդ վարդապետի ուժից և իրաւունքի սահմանից վեր էր բարձրից եկած հրամաններին և կարգադրութիւններին դէմ գնալը: Ուրեմն եթէ ոչ եռանդ ու վ (որպիսի բառը Լէօն է գործ դնում), այլ գոնէ խոնարհութեամբ, անբո-

գոր կատարող է եղել այդպիսի հրամանների: Այս պարզ գրուածը կարդալու համար ինչ իրաւունք ունի Լէօ գրելու. «Երևում է որ տէրութեական աշխարհում ուրիշ չափ ու հասկացողութիւն չկայ»: Իսկ եթէ ևս հարց տայի, որ աղքատ գիւղական տիրացո՞ւնքին արծաթ ու վ ինչպէս ինչը ս. Սեղրակեանն է գրում — քահանայացնող Գէորդ կաթուղիկոսը արդեօք առանց արծաթի կեպիսկոպոսացնէր փոխանորդական չաղ պաշտօն վարող մի վարդապետի — ինչ կասէք այն ժամանակ:

Եւ Լէօ իր չափազանց արիստակէսասիրութիւնից պաշտպանում է և նրա՝ ս. Արիստակէսի՝ այս բառացի պաշտօնական խնդիրը Տփլիսի քահանաների մասին՝ «գոչ համապատասխանան կոչման՝ իւրեանց ի գաւառս առաքել»: Ինչ իրաւունքով, ընտրողական սկզբունքի սր յօդուածի հիման վրա, որպիսի վերաբերմունք է դէպի գաւառը: Երևում է որ «Մշակն» անտէր է մնացել, չկայ Արծրունի, որ իր աշխատակիցներին իրենց տեղն ու չափը ցոյց տայ: Եւ այսօր «Մշակը» բացարձակապէս պաշտպանում է մի առաջարկ, որ ոչ թէ՛ ճշմարիտ է, այլ որ իբր կամ իր բարեկամինն է. իսկ այդ վարմունքը պերճախօս սագոցոյց է, որ այսօրվայ «Մշակն» իր կամ իր բարեկամի եւս զերադասում է ճշմարտութիւնից: «Մշակի» ներկայ վարձաւոր խմբագրութիւնը մտածնում է, որ ոչ մի անկեղծ ազատախոն մարդ չի մեղադրիլ մի ուրիշին կարծիքների տարբերութեան համար. այն ինչ նա՝ խմբագրութիւնն իր նման շատածոզների արեան մէջ է թաթախում իր գրիչը և նրանց գոյութեան վրա խաչեր է դնում: Այսպէս էին վարվում ասիական բունապետները իրենց ոչ միայն

թշնամիների, այլ և իրենց նման չմտածողների հետ: Եւ ինչ զանազանութիւն հոգևոր թէ աշխարհիկ, կեանքի ու գրական, միջնադարեան ու վերջնադարեան բռնապետների մէջ: Կարծեմ, «Մշակը» պ. Սունդուկեանի վրա ևս խաչ էր տնկել—սակայն այսօր ինչպէս լիզում է իր տնկած խաչը:... Օ՛, որ գիտենայք, պ. Լէօ և ընկ., սրբապիսի հաճոյք է զգում մարդ, երբ մի քամու փոքրիկ հոսանքից տեսնում է այդպիսի անպարտաւան ձեռքերով կանգնեցրած խաչերի ոչնչանալը... հաւատացէք — առնուազն՝ կկարմրէիք...

«Ահա Մեսրոպ քահանան, զրում է Լէօ, ամենամեծ հաճութեամբ ձեռք է առնում Արիստակէս եպիսկոպոսի անձնաւորութիւնը: Ի՛նչ է գտնում նրա մէջ: Կաշառակերութիւն, սիմօնականութիւն, տգէտ քահանաների հովանաւորութիւն, եկեղեցական բարեկարգութիւնների դէմ թշնամութիւն»: Այս արդէն ոչ թէ մի Լէօ-ի, մի առիւծի պաշտպանութիւն է, այլ յետին կատուի պաշտպանութիւնից էլ ստոր է: Այդ խեղճութեան հասցրիք ս. Արիստակէսին: Ես Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանի մէջ աչքի ընկնող արժանիքներ եմ որոնել, արժանիքներ եմ փնդուել, այլ ոչ քրէական յանցանքներ: Այլապէս չէի լինիլ ոչ նրանով ոգևորված և ոչ այժմ յուսախարված: Ուրեմն Լէօի և ընկ. կարծիքով խնկարկելու չափ արժանաւոր է սրբ. Արիստակէս, որ յանցաւոր պակասութիւններ, մոլութիւններ չունի: Սա՛ շատ ողորմելի արժանաւորութիւն է և, համաձայնեցէք, աւելի ողորմելի պիտի լինին «այդ չափ արժանաւորին» անչափ փառաբանող ու պաշտամունք մատուցանողները...

Ես վերջացրի:

Եւ Լէօ և ընկ. տեսան թէ ես իմ «Քահ. խնդ. չըջ.» տետրով իմ գոյութիւնը որպիսի խաչով եմ պարզարել. այսպիսի խաչեր գեռ շատերը մտադիր եմ կանգնելու իմ գոյութեան ընաթցքում: Թող զիտցած լինին և այս, որ եթէ ես «ուխտեր գնալու» կամ ճշմարտութիւններն ու բողոքները «յարմար ժամերին» լոյս հանելու Լէօ-ի ակնարկած առաքինութիւններն ունենայի, ս. Արիստակէսի և «Մշակի» դէմ երբէք ձայն չէի բարձրացնիլ այն միջոցում, երբ տիրող հոգևոր իշխանութիւնը մի մեծահոգի իշխանութիւն է, իսկ Արիստակէս՝ համարվում է ապագայ հաւանական կաթուղիկոսացուն, «Մշակն» էլ՝ մի անեղ գօրութիւն: Այս տեսութեամբ՝ մի մեծահոգի իշխանութեան հաճոյանալու ձգտումը բնաւ չէր կարող միաժամանակ «Մշակի» և ս. Արիստակէսի նման «պատժող ու վարձատրող» հսկաների ինձ հետ անհաշտ թշնամի դարձնելուց զգոյշ չպահել ինձ:



ԱՐԻՍՏԱՎԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԵՐՋԻՆ ԵՄՄԱՐ:

Մի քանի խօսք էլ Արիստակէս եպիսկոպոս Սեզրակեանի՝ Ատրպատականի թեմակալ առաջնորդութիւնից հրաժարվելու առիթով «Մշակի» № 127 — ում հրատարակած նամակի մասին:

Լրագրները հրատարակեցին, որ Սեզրակեան սրբազանը միաձայն ընտրվել է Ատրպատականի թեմակալ առաջնորդ: Նրան՝ իր վերջին գրքով՝ լաւ ճանաչողներնս համար պարզ էր, որ «կեցութեան զժուարին պայմաններից» փախչող երիտասարդ վարդապետը եպիսկոպոսական աստիճանում և աւելի տարիքոտ հասակում Ատրպատական չէր գնալ: Կարճ միջոցից յետոյ մամուլը հաստատեց այս ենթադրութիւնը:

Տ. Արիստակէսով յափշտակվածների մեծ մասը խորապէս ցաւ գգաց, մի մասը մինչև իսկ չկարողացաւ չբողոքել: Ախարալարից բազմաստորագիր բողոք ուղարկվեց «Մշակին», ինչպէս պատմեց բողոք գրողներից մէկը: Ներկայ անկողմնապահ «Մշակն» այն բողոքը խեղդեց, լոյս չհանեց և թերևս՝ «Թիֆլիսից գրած մի նամակ», որի մասին ակնարկում է իր յօդուածում Տ. Սեզրակեան, այս բողոքների առիթով ևս լուր հասցրած լինի նրան և՛ շատ հաւանական է որ՝ «Մշակի» մէջ լոյս տեսած նամակն էլ հէնց այդպիսի բողոքների պատասխանը լինի: Լաւ միտ առնել պէտք է. մտրակող, բողոքող, մեքկացնող,

«Մշակը» այսօր ծածկում է բազմաստորագիր բողոքները իր բարեկամ եպիսկոպոսի ծագկեայ փիլոնի տակ...

Սակայն ինչ կօգնեն այդ միջոցները: Քիչ շատ կարգալ գիտցող մարդը չի կարող այն նամակի մէջ չկարգալ ու չճանաչել հեղինակին իրեն՝ ինչպէս որ կայ:

Նամակը կրում է՝ «Մի քանի խօսք իմ հրաժարականի առիթով» վերնագիրը և բռնում է «Մշակի» 127 համարի բանասիրական բաժնում Տ. տմբողջ սիւն, որից միայն վերջին սիւնի կէսն է պարունակում հրաժարվելու պատճառները, մնացածը՝ շատ անկարևոր բաներ և ն, եթէ աւելին չեն:

Այդ թեմի կարօտութիւնները, պակասութիւնները — գրում է նա վերջին կիսասիւնի մէջ — շատ են. բայց այդ բոլորին քիչ ու շատ հոգատար լինելու համար հարկաւոր են նիւթական միջոցներ և երկար տարիներ: Թեմական ժողովուրդն ինքը միջոցներ չունի. զրա համար էլ այդ թեմում որ և է հիմնական, օգտակար գործ արած լինելու համար հարկաւոր է հրաւէր կարգալ արտաքոյ Պարսկաստանի գտնվող ազգայիններին, նպաստներ խնդրել. իսկ զրա համար, ինչպէս ասացինք, հարկաւոր է ժամանակ. արդ՝ սվ է երաշխաւորում, որ Ատրպատական գնացող առաջնորդը մի քանի տարիներ պաշտօնի մէջ կլինի, և մի երկու տարուց յետոյ ս. էջմիածնի սինօզի մի հեռագիր չի հարկազրի նրան թողնել Թաւրիզ և վերադառնալ, թէկուզ որ և է պաշտօն կատարելու համար»:

Եւ այսպէս՝ Ատրպատականից Սեզրակեան եպիսկոպոսը հրաժարվեց, որովհետև թեմն աղքատ էր, հրաժարվեց. որովհետև կայսերական բարեհաճութիւն

չկար երկար մնալու պայմանն ապահովող: Ի ս կ ժ ո-  
ղ ո վ ը դ ա կ ա ն մ ի ա ձ ա յ ն ը ն տ ը ու թ իւ ն ը:  
է՛հ, քանի փարայ արժէ նոյն ինքը ժողովուրդը ժո-  
ղովրդի և ժողովրդական անունից, մեր եկեղեցու  
պայծառութեան և կանոններից այնքան սրտացաւ  
խօսողների համար: Սրանից էլ աւելի սուր կերպով  
անհնարին էր մերկացնել Սեղրակեան սրբազանի ներ-  
քին մարդը, ինչպէս ինքն է իրեն մերկացրել: Նախ՝  
սինոզը գործ չունի Ատրպատականի թեմակալու-  
թեան հետ: Երկրորդ՝ մեր եկեղեցու «նախնաւանդ  
կանոններով» թէկուզ երբեմն ընդդէմ սինոզի ընթա-  
ցող եպիսկոպոսը շատ լաւ գիտէ, որ «սինոզի մի  
հեռագիր» անգօր է Ատրպատականի թեմակալին  
յետս կոչելու: Երրորդ՝ ինչ ասել է մի քանի տարի  
պաշտօնի մէջ լինելու երաշխաւորութիւն: Մեր եկե-  
ղեցական կանոններով ինչպէս քահանայի ընտրու-  
թիւնն է ցմահ պաշտօնավարութեան պայմանն ամ-  
փոփում, այնպէս և հայրապետինը, այսպէս և առաջ-  
նորդինը: Իմ խորին համոզմունքով՝ Սեղրակեան  
սրբազանը—թող ներվի ինձ ասել—հէնց խուսափել է  
ընտրութեամբ կարգվելով՝ ց մ ա հ ա յ ն տ ե դ մ ն ա-  
լ ու զ ը ու թ իւ ն ի ց: Եւ վերջապէս ո՞ր գործող մար-  
դը ունի մի քանի տարի ապրելու երաշխաւորութիւն:  
Գործի իսկական ծարաւ ունեցող մարդը կգործի:  
Թերթի կմայ գործն իր մահուան կամ իրեն հեռա-  
ցնելու պատճառով՝ պարզ է—որ մեղքն իրենը չէ:  
Գործի իսկական ծարաւ ունեցող մարդը ձեռք կը-  
զարկի կարօտութիւնները, պակասութիւնները կա-  
րեոր միջոցներով լրացնելու: Չկամութիւնը կամ այլ  
պատճառները անժամանակ յետ կկանչեն նրան, ինչ  
փոյթ, սկսված, բայց թերի մնացած օգտակար գոր-

ծերը լեզու կառնեն գործողի եռանդը, շնորհը, իր  
տեղում մնալու անհրաժեշտութիւնը բարձրագոյ կը-  
վկայեն և անարդար կարգադրութեան դէմ բողոքներ,  
աղաղակներ կբարձրացնեն:

Արիստակէս եպիսկոպոս, եթէ իսկապէս նախան-  
ձանխնդիր լինէր մեր եկեղեցու հոգուն—ընտրողական  
սկզբունքին՝ առանց տատանվելու պիտի թեմական  
ժողովրդից ընտրված առաջին առաջնորդութիւնը  
ուրախութեամբ ընդունէր, Սեղրակեան ազգանունը՝  
Ատրպատականի առաջնորդի վերածէր:

Սեղրակեան եպիսկոպոսին շատերը համարում  
են խիստ սկզբունքի տէր մարդ: Այս սկզբունքի տէր  
ճանաչված սրբազանն իր վերը յիշված բամբասամիտ  
նամակի մէջ գրում է. «1893 թւի նոյեմբերի 12-ին  
Նորին ս. Օծութիւնը սինոզ եկած լինելով ի միջի  
այլոց բարեհաճեց հարցնել. «Աստրախան զո՞վ ուղար-  
կել»: Աստրախան զով ուղարկել հարցմունքը լսելուն  
պէս դիմացս նստած Սարգիս եպիսկոպոսը (այժմ  
հանգուցեալ) յետ ծալվեց դէպի աթոռի թիկունքը...  
և ուղղելով ինձ մի տեսակ աղերսախառն հայեացք՝  
ձեռը մի քանի անգամ կուրծքին խփեց, հասկացնե-  
լով թէ խնդրում է իր անունը տալ իբրև Աստրախանի  
թեմի առաջնորդացու. և ես՝ զիջանելով այդ նշանացի  
աղերսանքին՝ ասացի. «Վեհ. Տէր, Սարգիս սրբա-  
զանը կարող է Աստրախանի առաջնորդ լինել, եթէ  
կամենայ գնալ»: Արդ՝ սկզբունքի մարդը սինոզում՝  
զերծալի, խաչ ու աւետարանի առաջ հայրապետի  
անձամբ արած պաշտօնական հարցմանը կներթի իրեն  
զիջանիլ այլ և այլ նշանացի աղերսանքների և մատ-  
նացոյց անել այնպիսի անձի վրա, որին ինքը միշտ

անարժան է ճանաչել: Սկզբունքի մարդը կենքի արդեօք ամբողջ թեմի կտրիքները խաթրաշահութեան, մարմնաճշտութեան գոհարեղի: Իրար խաթր շահելու համար են աթոռ գլխուէլ սինոդուս:

Արխատակէս եպիսկոպոսին շատերը և մանաւանդ ինքը \*) իրեն համարում են կարգապահ մարդ: Վերջըրեալ իր 8 սիւնեայ նահակի մեծագոյն մասով յայտնում է անաղին տրտունջ, բողոք այն բանի համար, որ ինչպէս Պետերբուրգից, այնպէս և Ատորախանից Վեհափառ Վաթուղիկոսի անունով իր ուղարկած յայտարարութիւնների իմաստը լոյս են հանվել «Արարատի» կամ այլ լրագրերի մէջ: Եւ այս տրտունջը, բողոքն անում է այն մարդը, որ ամբողջ «Ամուսնական», «Ֆահանայական» խնդիրների պըրեր է հիւսել բոլորը պաշտօնական թղթերից առանց կանխապէս լուծումն ստանալու իր իշխանութիւնից: Վեհափառ Վաթուղիկոսը, որ տէրն է ու իշխանաւորը թղթերից ու գործերից այս կամ այն կտորը հրապարակ հանելու կամ գաղտնի պահելու, ըստ ս. Արխատակէսի, յանցանք է գործում, թոյլ տալով հրապարակ ելնելու այս կամ այն թղթի իմաստը, իսկ ինքը, որ մի ստորագրեալ անձն է, մեռած թէ կենդանի անձնաւորութիւնների արարքները մերկայնող այնպիսի պաշտօնական թղթերից իրաւունք է համարում իրեն անկանարօք քաղուածներ անելու և հրատարակելու: Մի առաջնորդ մարդ, որ կոնսիստորիայի կամ նախորդ առաջնորդների տրիւնները պաշտօնական այլ և այլ խնդիրներ լուծելու կամ պարզաբանելու համար ազատ բանայ և որքան կամենայ օգտվի

\*) Տես «Բ. ս. խնդ.» կր. 39.

պաշտօնական գործադրութեան համար՝ շատ հասկանալի է: Մի սինոդի անդամ, որ սինոդի յատուկ յանձնարարութեամբ ուսումնասիրի պաշտօնական գործերը զեկուցումներ պատրաստելու և նոյն սինոդին ներկայացնելու համար — նոյնպէս շատ հասկանալի է, բայց որ առաջնորդ կամ սինոդի անդամ անձը ների իրեն առանց իշխանութեան թոյլտուութեան, պաշտօնական թղթերից պատճէններ արտագրելու, իր մօտ պահելու մասնաւոր գործադրութեան և մինչև անգամ ցանկացած ժամանակ նոյն իսկ տպագրութեամբ լոյս ընծայելու համար առնուազն՝ անկարգապահութիւն է:

Արխատակէս եպիսկոպոս, մերկայցնելով այն հանգամանքը, որ Վեհափառ Վաթուղիկոսը պ. Աղ. Մ. Ա. — ի միջոցով է փորձել իր համաձայնութիւնը ստանալու Ատորապատականի թեմակալութիւնն ընդունելու մասին, «Մշակի» միջոցով յետագայ հրեք հարցումներն է առաջարկում ի բրև բ ա ց ա տ ր ու թ ե ա ն կ ա ռ օ տ կ է տ ե բ: «Առաջին՝ «եթէ նորին Սրբութիւնը կամենում է ինձ Թաւրիզի առաջնորդ տեսնել, ինչո՞ւ արդեօք այդ հայրապետական կամբը ոչ ուղղակի ինձ, ի բ ա ն մ ի ջ ա կ ա ն ս տ օ ռ ա զ ր ե ա լ ի ն (ընդ գծումն իմս է) է յայտնում, այլ երբորդ անձի միջնորդութեամբ»: Որովհետեւ — համարձակութիւն եմ առնում վրաս պատախանելու — ստորագրեալը Հայրիկի նման Հայրապետի ստորագրեալ չէ, այլ Քէորդի նման... կաթուղիկոսի, որին փոքր ինչ ընդդիմութիւն գործելու երկիւղից, «բարձրից եկած հրամաններին հակառակելը մի ստորագրեալ եպիսկոպոսի իրաւունքից վեր է» պատճառաբանութեամբ կարգարացնելը:

«Տ. Սեղրակեան Պետերբուրգում, կարևոր յանձնարարութեամբ գնացած ժամանակ, արհամարհում է հայրապետական կոնդակը, հրամանը Պետերբուրգ սպասելու մասին և վճռական կերպով պրում է իր ծայրագոյն իշխանաւորին՝ «մնայ ինձ ձեռնթափ լինել ի դործոյս և անապարել ի տեղի իմ» և կատարում է գրածը: Ս. Սեղրակեան արհամարհում է հայրապետական կոնդակը «արքութեան» պատիւ իրեն տալու վերաբերութեամբ և պահանջում ու սպասում է, որ Վաթուգիկոսն իր կամքն ուղղակի յայտնի: Այս ամենի վրա աւելացնենք, եթէ երբորդ մարդու, այն էլ երկու կողմերի համար էլ բարեկամ ու յարգելի մարդու, միջոցով առաջարկութիւն անելը մեղադրելի է, ապա ինչ է այդ «անմիջական ստորագրեալի» արածը, որ մամուլի միջոցով է այդ գաղտնի բանակցութիւնը լոյս հանում, զիմուսներ անում, հարցումներ տալի:

Օրինակելի ստորագրելութիւն:

Երկրորդ՝ հարց է տալի Տ. Սեղրակեան. «ճրպխսի լուրջ պատճառներ կարող էին ինձ մի թեմից միւսը փոխադրելու օգտին ծառայել»: Նախ իրեն՝ եթէ ոչ կեղծաւորաբար «ստորագրեալ» անուանող մի եպիսկոպոս պիտի գիտենայ, որ այդ՝ իշխանաւորի իմանալու բանն է, երկրորդ՝ որ Աստրախանի թեմը իր՝ ս. Սեղրակեանի խօսքով ասեմ՝ Սարգիս եպիսկոպոսի նմաններն էլ կարող են կառավարիլ. այն ինչ պարզ է ու իրեն էլ յայտնի, որ Ատրպատականը անապին կարիքներ, գործունէութեան մեծ ասպարէզ ունի և Սարգիս եպիսկոպոսի նման մարդիկ չեն կարող կառավարիլ. հետևապէս այս ամենն այսքան աշկա-

րայ լինելուց յետոյ, ինչ կարիք կայ այլ և այլ մանուածապտոյտ ենթադրութիւններ անելու:

Երրորդ հարցն է. «նորին ս. Օծութիւնը Ատրպատականի թեմի ժողովրդին իրան է տուել կոնդակով առաջնորդական ընտրութեան իրաւունքը. արդ՝ որպիսի հարկադիր պատճառներից տոխաված բարեհաճում է ընտրութիւնից շատ վաղ այդ պիսի փափագ յայտնած լինել. չ որ ժողովրդական պատգամաւորները պիտի ընտրութիւն կատարեն. ուրեմն կայ արդեօք Մայր Աթոռի և Թաւրիզի մէջ այդ մասին նախօրօք եղած համաձայնութիւն»: Սրբազանն ինքն ասում է «ընտրութիւնից շատ վաղ», այսինքն՝ առաջնորդական ընտրութեան իրաւունքը ժողովրդին տալուց առաջ: Արդ՝ ինչ են ցոյց տալի այսքան պարզ խնդրի մասին այլ և այլ հարցումներն ու ակնարկները:

Քալանթարի և ընկ. «Մշակը», թաղելով խրմբազրական զամբիւղի մէջ Արիստակէս եպիսկոպոսի գէմ յայտնված դժգոհութեան ձայները, շտապեց հրապարակ հանել նրա վերն առաջ բերած նամակը, անտարակոյս ողևորված այն մտքով, որ ս. Սեղրակեան աշխարհի առաջ նորանոր երևելի մեղկացումներ է անում: «Մշակ» այնքան կոյր է պաշտում սրբազան Արիստակէսին, որ մոռանում է նոյն իսկ զգուշանալ հրապարակ հանելու նրա այնպիսի գրութիւնները, որոնցով սրբազանն ինքն է մերկանում, ինքն է իրեն վայր ձգում: Ի՛նչ, երեխաներ են կարծում «Մշակ»-ի ընթերցողներին. — այսքան պարզ, ակներև գործողութիւններն էլ չեն կարող միթէ տես-

ներ «Մշակ»-ի ընթերցողները և զայնրո՞թով շրջուել  
դէպի ներկայ խմբագրութիւնը, որ «Մշակ»-ը դէպի  
կորուստ, դէպի անկումն է տանում:

Հարկ կայ միթէ աւելացնելու, որ անկեղծ, ազ-  
նիւ, լրջմիտ իւրաքանչիւր մի մշակական պարտաւո-  
րութիւն ունի մտածելու «Մշակ»-ը այս ընկած վի-  
ճակից ազատելու համար:



«Ազգային գրադարան



NL0173525

